

ՅՈՒՆՈՒԱՐ

1 - 8 Յունուար

Անձրեւաբեր հողմեր եւ սնանկութիւններ:

Պզտիկ տղաներն ու մեծ տղաները – ծերերը – պարտին զգուշանալ ցուրտէն: Խոնաւութիւն կտիրէ ամենուրեք. հարբուխ եւ պզտիկ պարտքեր ունեցողներն սենեակէ դուրս ելնելու չեն:

Իրարու Նոր Տարի, երկար օրեր եւ բարօրութիւն կմաղթեն այցեւոր-մսերը:

Հաշուեկշիռները գոհացուցիչ չեն:

9 - 17 Յունուար

Փոփոխական օրեր:

Քանի մը լրագիրներ կփոխեն իրենց կարծիքները:

Երեսփոխանին մէկը ատենաբանութեան մէջ կկորսնցնէ խօսքին թելը եւ կ'երթայ մոմ վառելու Ս. Մինասին:¹

Բանաստեղծին մէկը ծով կնետէ ինքզինքն՝ մէջքը դդում կապելով:

Մեծ վաճառական մ'իւր պարտքերը վճարելու համար վճարումները կդադարեցնէ: Աստուած հետը ըլլայ:

18 - 24 Յունուար

Ամպամած եւ խոնաւ:

Քանի մը ընկերութիւններ կլուծուին:

Երիտասարդին մէկը հարուստ աղջիկ մը կյափշտակէ, տունը կտանի եւ հազար հինգ հարիւր ոսկի փրկանք կպահանջէ: Աւագակը փնտռուելու վրայ է:

Բառարան.

Փականք–*թրախօմա* (դրամօժիտ):

Ամուսին մը հազար ոսկի փրկանք կը խոստանայ իւր կինը լեռ մը տանողին:

Ասանկ ամուսիններուն համբերութիւն տայ Աստուած:

¹ Կ. Պօլսեցիք կորուստ ունենալիս առհասարակ մոմ վառելով դիմում են Ս. Մինասին: Սուրբի մասին այս կարծիքը յոյներից տարածուած է հայերի մէջ: